

րէն, եւ կամ նոցա համար ձեզի եկող երէցփոխանէն, քահանայէն, կամ ժամկոչէն. պարապ ձեռքով ետ մի գարձընէք զանոնք, որ Աստուած ալ զուրկ չթողու զձեզ իւր ուղորմութենէն. այլ ընդ հակառակն ձեր ողորմածութիւնը ընդունի նաեւ փոխանակ այն պահեցողութեան եւ ծովապահութեան, զոր պարտական էիք կատարել ի պատիւ սուրբ Ծննդեան եւ յայտնութեանն Քրիստոսի, եւ ձեր սկարութիւնը չթողուր: Անով միայն կրնաք նաեւ ձեր խղճմտանքը հանգչեցընել, եւ ըսել գուք ձեզի. թէպէտ եւ շատ հարուստներ մեծամեծ ողորմածութիւններ կրնեն, շատ արգարներ եւ ճգնաւորներ սաս-

տիկ պահեցողութիւններ կրնեն, բայց ես այն խեղճ այրւոյն պէս երկու լուծայ միայն կըրնամ տալ աղքատին ողորմութիւն. ուրեմն այն տամ, եւ յոյս չկարեմ ի Քրիստոսէ, որ պիտի ըսէ իւր հաւատարիմ ծառայից մէջ քիչ պարգեւաց եւ քանքարաց արժանի եղողներուն. «Ազնիւ, ծառայ բարի եւ հաւատարիմ, որովհետեւ ի սակաւուգ հաւատարիմ եղեր, ի վերայ բազմաց կացուցից «զքեզ. մնւտ յուրախութիւն Տեառն քո»: Այն յաւիտենական ուրախութեան արժանի ընէ զմեզ Քրիստոս, շնորհիւ սուրբ Ծննդեան իւրոյ եւ Յայտնութեան. նմա վառք յաւիտեանս. ամէն:

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

Որ ոք հեռի եկաց յանհուն սըաութեանց,
 ձըշմարտութեան գոլով քարոզ համարձակ,
 նա բոլորից ճիւղազ կարծի մարդախանձ,
 Հաւատուրաց, պատիժ ազգի, յելուզակ:

Զո՞ր ուղղութեան հատին մարդիկ երբէք գին,
 Արգարութեան զո՞ր կըշռեցին փոխարէն.
 Ո՞չ ապաքէն մահ Քրիստոսի գոչեցին,
 Մահ Սոկրատայ զերգ պատըրջի անօրէն.

Եւ Գալիլեւս, քանզի շարժեաց նա զերկիր,
 Քանի ձըգեաց յանձըն իւր թուք նախատինք:
 երկինք, ըզքոյգ ես գիտելով յաւէժ գիր,
 Այս է ասեմ մերոյ բազգին դատակնիք.

Այս՝ զի լաւին ի լաւագոյն մարդկանէն
 Խաչ գըրեցաւ ի կենցաղումըս բաժին,
 Ըզլոյս թափել ցանգ վասըն մեր յականէն,
 Մեզ ձօնել սիրտ, մեզ եւ ըզմիտս եւ զոգին.

Զաշխատութեամբ գալ ըզգիշեր եւ ըզտիւ,
 Վասն ընկերաց հեղուլ ըզքիրտն եւ զարիւն,
 եւ ի վերջէ իբրու յարգեանցըն պատիւ
 Զուրացողի ժառանգել խիտ մականուն:

ՏՈՒՐՈՎ